

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Աշոտ Վարդանյանի
պաշտոնական այցելությունների, պաշտոնական ելույթների,
հայտարարությունների, աշխատանքային այցերի և միջոցառումներին
մասնակցության վերաբերյալ**

*2014 թվականի ընթացքում մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանը
պաշտոնական այցելություններ , ելույթներ և հայտարարություններ չի
ունեցել:*

2014 թվականի փետրվար ամսից ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Աշոտ Վարդանյանը աշխատանքային այցերով եղել է մարզի 35 համայնքներում:

Այցելությունների ընթացքում մարզպետի տեղակալի ուշադրության կենտրոնում է եղել մարզի դպրոցներում 5-րդ հրատապ ծրագրի նախապատրաստման և իրականացման աշխատանքները, ինչպես նաև մարզային նշանակության ավտոճանապարհների ասֆալտապատման և պահպանման աշխատանքների ընթացքը:

Թվով 18 համայնքներում հանդիպումներ են կազմակերպվել դպրոցի և շինարարական կազմակերպության ղեկավարների միջև, որոնց ընթացքում քննարկվել և պայմանավորվածություն է ձևոք բերվել աշխատանքների ընթացքն այնպես կազմակերպվի, որ դրանք չխոչընդոտեն դասապրոցեսին: Ա. Վարդանյանի կողմից շինարարական կազմակերպությունների ղեկավարներին հանձնարարվել է շինարարության ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, ինչպես նաև այն աշխատանքները, որոնք կարող են խոչընդոտել դպրոցականների

տեղաշարժին և դասընթացների բնականոն ընթացքին, իրականացնել դասերից հետո կամ երեկոյան ժամերին:

Մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանի կողմից այցելությունները դպրոցներ և շինարարական հրապարակներ իրականացվել են գրեթե ամեն օր՝ ըստ անհրաժեշտության:

Մարզպետի տեղակալ Ա.Վարդանյանը պաշտոնավարման ժամանակահատվածում այցելություններ է ունեցել համայնքներ՝ նաև հասարակական միջոցառումների մասնակցելու նպատակով:

Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ Ա.Վարդանյանը մարզպետ Ռ.Աբրահամյանի հետ միասին այցելել է Նոր-Խարբերդի մասնագիտացված մանկատուն:

Գյուղատնտեսական նախապատրաստական և հետագա աշխատանքների մարզպետարանի հետ համատեղ կազմակերպման նպատակով Ա.Վարդանյանը աշխատանքային այցեր և հանդիպումներ է ունեցել մարզի գյուղացիական տնտեսությունների, ջրամատակարար ընկերությունների, մթերող և արտադրական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Մարզպետի տեղակալ Ա.Վարդանյանը մայիս ամսից Արարատի մարզպետարանի 'Թեժ գծով' ստացված հարցերի պարզաբանման և բողոքների ուսումնասիրման նպատակով ևս աշխատանքային այցելություններ են կատարվել մարզի տարբեր համայնքներ:

01.09.2014

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Իլյիշ Շադյանի պաշտոնական այցելությունների, պաշտոնական ելույթների, հայտարարությունների, աշխատանքային այցերի և միջոցառումներին մասնակցության վերաբերյալ

2014 թվականի ընթացքում մարզպետի տեղակալ Ի.Շադյանը պաշտոնական այցելություններ, ելույթներ և հայտարարություններ չի ունեցել

2014 թվականին ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Ի.Շադյանը աշխատանքային այցերով եղել է մարզի 25 դպրոցներում, 45 մանկապարտեզներում: Ուսումնասիրվել է երեխաների սնունդի հարցը, որի համար տրվել են համապատասխան ցուցումներ:

Հունիս ամսին Ի.Շադյանը այցելել է մարզի 25 դպրոցներ՝ ավարտական քննությունների կարգի անցկացման ստուգումների նպատակով:

Օգոստոսի 15-ից սկսվել են աշխատանքային այցեր մարզի 18 դպրոցներ՝ շինարարական աշխատանքների ընթացքը հսկելու նպատակով, օգոստոսի 20-30-ը՝ մարզի դպրոցներում ուսումնական տարվա նախապատրաստման աշխատանքներին ծանոթանալու և հանձնարարականներ տալու նպատակով:

Սեպտեմբերի 1-ին՝ մասնակցություն Վարդաշենի դպրոցի նոր շենքի բացման արարողությանը: Սեպտեմբերի 1-ին մասնակցություն նաև Մասիս քաղաքի ավագ դպրոցի նորակառույց մասնաշենքի բացման արարողությանը:

Սեպտեմբերի 8-ին՝ մասնակցություն Արտաշատ քաղաքի կուլտուրայի տանը կազմակերպված < Փարաջանովի հետադարձ լույսը > խորագրով ցուցահանդեսին:

Մարզպետի տեղակալ Ի.Շադյանը տարվա ընթացքում համակարգել է մշակույթի և սպորտի բնագավառում իրականացված միջոցառումների կազմակերպչական աշխատանքները: Կազմակերպվել են մարզային հուշամրցաշարեր, առաջնություններ և այլ մարզային միջոցառումներ: Ի.Շադյանը մասնակցել է նաև մարզի համայնքներում կազմակերպված մի շարք տարբեր հասարակական, մշակութային, ազգային տոների հետ կապված միջոցառումներին:

Մարզում իրականացված միջոցառումներ՝

- Մարտի 8-ին կանանց միջազգային օրվա կապակցությամբ մարզկենտրոնում և մարզի տարբեր համայնքներում կազմակերպվել և անցկացվել են տոնական միջոցառումներ:
- Մարտի 27-ին թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ Արարատի մարզպետարանում կազմակերպվել է թատրոնի դերասանների ընդունելություն և պարզևատրման արարողություն:

- Ապրիլի 7-ին մայրության օրվա կապակցությամբ մարզի տարբեր համայնքներում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ: Ապրիլ ամսին կազմակերպվել է <Երգող Հայաստան> մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 4—րդ մրցույթի մարզային փուլը:
- Ապրիլի 24-ին մարզի բոլոր համայնքներում կազմակերպվել են ցեղասպանության 99-րդ տարելիցին նվիրված սգո երթեր և պսակադրության արարողություններ:
- Մայիսի 1-ին մարզի համայնքներում կազմակերպվել են համերգներ՝ նվիրված աշխատանքի օրվան:
- Մայիսի 9-ին մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ նվիրված Շուշիի ազատագրմանն ու հաղթանակի օրվան:
- Մայիսի 17-ին թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ Պ.Սևակի տուն թանգարանը մասնակցել է <Թանգարանները միավորում են մեզ> խորագրով միջոցառմանը:
- Մայիսի 28-ին համայնքներում կազմակերպվել են տոնական համերգներ՝ նվիրված հանրապետության օրվան:
- Մայիս – հունիս ամիսների ընթացքում իրականացվել են մարզում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների տարեվերջյան հաշվետու համերգների, ցուցահանդեսների լուսումներ, դիտումներ և քննարկումներ:
- ՀՀ սփյուռքի նախարարության կողմից հունիս ամսին մեկնարկվեց հայրենաճանաչության 2014թ-ի <Արի տուն> ծրագիրը:
- Հունիսի 17-ին Զանգակատուն համայնքում կազմակերպվել և անցկացվել է <Պոեզիայի տուն> մարզային մշակութային միջոցառումը, նույն օրը Արտաշատի Ա.Խարազյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվել է <Սևակ-90> ներկայացումը՝ նվիրված Պ.Սևակի 90-ամյակին:
- Հուլիսի 9-ին <Իմ Հայաստան> համահայկական փառատոնի շրջանակներում մարզի Արարատ և Արտաշատ քաղաքներում կազմակերպվել են համերգներ:
- Հուլիսի 27-ին մարզի ներկայացուցիչները մասնակցել են Գառնիում կազմակերպված <Վարդավառ> մշակութային միջոցառմանը:
- Հուլիսի 28-ին Մրգավանի սբ.Հակոբ եկեղեցում կազմակերպվել է <Վարդավառ> մարզային մշակութային միջոցառումը:
- Ապրիլ-մայիս ամիսներին մարզի 35 մանկապարտեզներ մասնակցել են ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության կողմից կազմակերպված <Սպորտլանդիա> մարզական միջոցառման 1-ին փուլին, որում հաղթած 9 մանկապարտեզներ հունիսի 10-ին ք.Արտաշատում մասնակցել են մարզային փուլին:
- Մարզի 9 երիտասարդներ օգոստոսի 18-24-ը Ծաղկաձորում մասնակցել են <ԲԱԶԵ> համահայկական երիտասարդական հավաքին:
- Օգոստոսի ամսին կազմակերպվել է <Փարաջանովի հետադարձ լույսը> խորագրով ցուցահանդեսի տարածաշրջանային փուլը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Աշոտ Մուրադյանի պաշտոնական այցելությունների,
պաշտոնական ելույթների, հայտարարությունների, աշխատանքային այցերի և
միջոցառումներին մասնակցության վերաբերյալ**

*2014 թվականի ընթացքում մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանը պաշտոնական
այցելություններ, ելույթներ և հայտարարություններ չի ունեցել*

2014թ. հունվար ամսից ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանը
աշխատանքային այցերով եղել է մարզի 67 համայնքներում:

Այցելությունների ընթացքում մարզպետը տեղակալի ուշադրության կենտրոնում է
եղել տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն առընչվող
խնդիրները, առողջապահության և սոցիալական բնագավառների, ազգաբնակչության
տրանսպորտային սպասարկման, մարզային և համայնքային նշանակության
ավտոճանապարհների պահպանման, շահագործման և վերանորոգման խնդիրները:

Աշխատանքային այցերի և հանդիպումների ընթացքում մարզպետի տեղակալ
Ա. Մուրադյանի կողմից համակարգվել են նաև զորակոչին, զորահավաքային
նախապատրաստությանը, արտակարգ իրավիճակներին և քաղ. պաշտպանությանը
առընչվող հարցեր, իրականացվել են կազմակերպչական աշխատանքներ:

Մարզպետի տեղակալը մասնակցություն է ունեցել նաև մարզի համայնքներում
կազմակերպվող մշակութային և հասարակական միջոցառումներին:

1.09.2014